



## 145. ՇՈՒԹԵՆ ՔԱՐԸ

Մին մարթու կնեգյ մըեռնում ա, քյինամ ա մին օրիշ կնեգյ պիրունմ, էտ մարթին առաշվա կնդանան մին ախճիգյ ա ինում, Ախճիգյը վըեր մըծանում ա, փսակում ըն, մարթու տամ, Զերանը պտրումանց տոնը քյինալը խորթ մարը մին քար ա տինունմ ըխճրկանը ծուցումը, թափշուր անում, թա հիբը վըեր էս քարը կըխոսսե, տու վըել կըխոսսես:

Ախճիգյը վըեր հառն ա քյինամ, վըել մինին նհետ խոսում չի: Մին երկու տարե վըեր անց ա կենում, տնըցեքյ գլուղունմ ըն թա լալեգյ ա: Քյինամ ըն ըխճրկանը հարանց տոն, հրցընում, հարն ան մարը ասում ըն.—Վըեր մարթու վընթ տուվալ, խուսելիս ա իլան, Ետ կյամ ըն ըխճրկանը նորըմինան խուսըցընում, խոսում չի: Վերը, տրա նշանածն ասում ա.—Սա լավ հառն ա, պեց թուղելի չի, բայց ինձնըհհետ խոսող կնեգյ էլ ա հարկավըեր: Տրան թողում ա տանը, ինքը քյինամ մին օրիշ կնեգյ էլ պիրունմ:

Թաղա կնեգյը վըեր ծիյին յիբան նստած կյամ ա տանը հայթը, ծեն ա տամ, թա՝ ա՝ լալ եկած, քառ եկած հառնը, տանան տնեն եք, ես կյամ ըմ: Էտ հառնը էլ կարում չի ախմանա, կըզնըվում ա, խոսում, ասում.—Հալան ծիյան վըեր եք, ետնան խոսե: Մարթը թա վըեր քեզ լուզի յա իլան, վըե՞ր օրվա հետե յըս պահալ: Կնեգյը քարը ծուցան տոնս ա օնում, թա դե՝ իմար ա սա տիրան ծուցումըս, ասալ՝ հիբը վըեր տա կըխոսսե, տու վըել կըխոսսես: Մարթը էտ թաղա պերած հառնեն ծիյան էլ վըեր չի օնում, ետ տանում ա թողում հարանց տանը, կյամ ուրան կնդանը տըրոթուն անում: